

ՎԱՐԴԱՆ ՍԱԽԿԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՇԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՁ

Հոդվածում հանգամանորեն քննարկվում են իրավունքի գիտական ճանաչողության հետ կապված խնդիրները: Հեղինակը վերլուծության է ենթարկում նաև իրավահասկացության հարցերը տեսական գրականության մեջ և տախու է իրավահասկացման բնորոշումը՝ որպես 1) իրավունքի ճանաչում, 2) իրավունքի ընկալում, 3) իրավունքի գնահատում և արմուրում:

Հիմնարարեր - իրավունքի իրավահասկացություն, գիտական ճանաչողություն, իրավունքի բնկայում, իրավունքի եռորդն, իրավունքի բովանդակություն:

Առանց չափազանցնելու կարելի է արձանագրել, որ իրավահասկացման հիմնահարցը կենտրոնական տեղ է զբաղեցնում իրավաբանական գիտության մեջ: Սակայն, որքան էլ դա պարագորքսալ թվա, «իրավահասկացում» բուն ֆենոմենը, մեր կարծիքով, հետազոտված է շատ մակերեսորեն: Անբավարար չափով են մշակված իրավահասկացման հարցերը գրականության մեջ. չկա միանշանակ պատասխան. «Փ՞նչ է նշանակում հասկանալ իրավունքը»¹:

Դրա հետ մեկտեղ առանձին փորձեր են կատարվում՝ դիտարկելու այս հիմնախնդիրը, ինչի հետևանքով առաջ են գալիս տարբեր մոտեցումներ իրավահասկացման՝ որպես յուրահատուկ ֆենոմենի հետազոտման վերաբերյալ:

Այսպես, օրինակ, իրավահասկացումը բնորոշվում է որպես «փիլիսոփա-իրավական կատեգորիա», որը վերաբերում է դոկտրինալ իրավագիտակցության բնագավառին և ընդունվում է իրավունքի և իրավական երևույթների ծագման, զարգացման և գործողության օրինաչափությունները: Իրավահասկացումը ներկայացված է կոնկրետ իրավական գաղափարների, հայացքների համակարգերի, տեսական կառուցվածքների տեսքով, որոնք պարունակում են ինչպես ծագումնաբանական, այնպես էլ գոյաբանական բնույթի որոշակի օրինաչափություններ»²:

Ըստ ամենայնի, առաջարրված այս բնորոշումը չի կարելի բավականաչափ հաջող համարել, քանի որ դրանում ակնհայտորեն բացահայտված չեն բուն ֆենոմենի էական հատկանիշները: Հեղինակն ըստ էության միայն արձանագրում է, որ իրավահասկացումը վերաբերում է իրավագիտակցության որոշակի ոլորտին, և թվարկում է միայն նրա էմպիրիկորեն ընկալված արտաքին

դրսորումները, այսինքն՝ նշում է, թե որ տեսքով է այն «ներկայացված»:

Մեր կարծիքով, այս հիմնահարցի վերաբերյալ ուշադրության են արժանի Վ. Ի. Լեռշինի և Վ. Դ. Պերևալովի տեսակետները: Նրանց մոտեցումը առավել հետաքրքիր է այն պատճառով, որ նրանում ընդհանրացված տեսքով արտացոլվում են հետազոտվող հարցերի վերաբերյալ լայնորեն տարածված հայացքները, հետևաբար, դրա վերլուծությունը հնարավորություն կտա ավելի խոր ուսումնասիրել իրավահասկացման առանցքային հարցերը:

Անհրաժեշտ է նկատել, որ հեղինակները շատ համակողմանի ու մանրամասն են դիտարկում «իրավահասկացում» ֆենոմենը, ինչը սովորաբար բնորոշ չէ ուսումնական գրականության համար, որտեղ «իրավահասկացում» տերմինը լայնորեն օգտագործվում է առանց նրա բովանդակության պարզաբանման: Անհրաժեշտ է շեշտել նաև, որ, մեր կարծիքով, Վ. Ի. Լեռշինը և Վ. Դ. Պերևալովը իրավահասկացման հիմնախնդիրները բացահայտում են ճիշտ ընտրված գիտական ուղղությամբ՝ հենվելով և հղումներ անելով գիտական այնպիսի կատեգորիաների, ինչպիսիք են «Ճանաչումը», «ընկալումը», «գնահատումը», «սուրյեկտը», «քրովանդակությունը» և այլն: Դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, նրանց կողմից առաջարկվող մոտեցումը տվյալ հիմնահարցի վերաբերյալ կարիք ունի հետագա զարգացման և էական որոշ ճշգրտումների:

Այսպես, հեղինակները առաջարկում են հետևյալ սահմանումը. «Իրավահասկացումը գիտական կատեգորիա է, որն արտացոլում է մարդու նպատակառողությած մտածողական գործունեության գործընթացն ու արդյունքը և ներառում է իրավունքի ճանաչումը, նրա ընկալումը (գնահատումը)

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

և վերաբերմունքը նրա հանդեպ՝ որպես միասնական սոցիալական երևույթի»³: Այսպիսով, առանձնացվում են չորս հատկանիշներ, որոնք, հեղինակների կարծիքով թույլ են տալիս ձևակերպել իրավականակացման բնորոշումը. 1) իրավունքի ճանաչում, 2) իրավունքի ընկալում, 3) իրավունքի գնահատում, 4) իրավունքի՝ որպես «միասնական սոցիալական երևույթի» հանդեպ վերաբերմունք:

Տրամաբանական է ենթադրել, որ Վ. Ի. Լեռշինը և Վ. Դ. Պերելալովը դիտարկում են իրավականակացման այս տարրերը ոչ թե որպես պարզ ամրողականություն, այլ որպես յուրահատուկ համակարգ: Հակառակ դեպքում առաջարկվող սահմանումը չէր համապատասխանի բնորոշումների կառուցման տարրական այնպիսի սկզբունքին, ինչպիսին է համակարգայնությունը, որը ենթադրում է, որ «հասկացության էական տարրերակից գծերը կամ առարկայի էական հատկանիշները պետք է շարադրվեն որոշակի չափով համակարգված, այլ ոչ անկանոն»⁴: Ինչպես բխում է բերված սահմանումից, այն հաստատում կապը, որը թույլ է տալիս խոսել նրա որոշակի համակարգվածության մասին, հանդիսանում է բվարկված տարրերի ներմուծվածությունը «մարդու նպատակաուղղված մտածողության գործընթացի և արդյունքի» մեջ:

Սակայն, պետք է համաձայնենք, որ առաջարկված համակարգը ոչ ամրողովին է համապատասխանում ձևական տրամաբանության օրենքներին, քանի որ ներառում է տարրեր, որոնք առանձնացվում են միանգամայն տարրեր իմբրերով. դրանք նույն կարգի չեն և դասավորված են կամայական երթականությամբ: Այս կապակցությամբ առաջին երթին պետք է ուշադրույթուն դարձնենք իրավականակացման առաջարկվող այնպիսի հատկանիշի վրա, ինչպիսին է իրավունքի ճանաչումը:

Ճանաչման տակ իմացաբանության մեջ հասկացվում է զիտելիքներ ձևավորող ստեղծագործական գործունեություն,⁵ մեր դեպքում՝ զիտելիք իրավունքի մասին: ճանաչողական գործունեությունն իր մեջ ներառում է այնպիսի տարրեր (ճանաչման փուլեր), ինչպիսիք են զգացողությունը, ընկալումը, պատկերացումը և հասկացությունը: Այսպիսով, որպես էական հատկանիշ առաջարկվող ճանաչումը իրենով կլանում է նեկ այլ էական հատկանիշ՝ իրավունքի ընկալումը, քանի որ ճանաչումը հնարավոր է միայն ընկալման միջոցով: Այստեղից եղահանգում. տվյալ բնորոշման վերաբերյալ իրավունքի ընկալումը իրականում հանդիսանում է երկ-

բորդական հատկանիշ, և, հետևաբար, առանց դրա վերը բերված սահմանումը չի կորցնում իր նշանակությունը:

Իրավականակացման առանձնահատկությունը չի արտահայտում նաև առաջարկվող «վերաբերմունքը իրավունքի՝ որպես ամրողական սոցիալական երևույթի հանդեպ» հատկանիշը: Նախ և առաջ հարկ է նշել «վերաբերմունք» տերմինի անրոշությունը: Այն մեկնաբան է չափազանց լայնորեն և, հետևաբար, իրավականակացման հիմնախնդիրի վերաբերյալ պահանջում է հատուկ կոնկրետացում: Երկրորդ, իրավունքի ընկալումն ու գնահատումը իրենցից ներկայացնում են հենց տվյալ ֆենոմենի հանդեպ յուրատեսակ սուբյեկտիվ վերաբերմունք: Ընկալումը զգայարանների վրա անմիջականորեն ներգրածող իրավական երևույթների ու գործընթացների արտաքին կառուցվածքային բնութագրերի զգայական պատկերն է⁷: Գնահատումը մտածողական ակտ է, որը հանդիսանում է առարկայի հանդեպ գնահատային վերաբերմունքի արդյունք՝ կախված այդ առարկայի հատկություններից: «Գնահատման ակտի արդյունքում առարկան կարող է ճանաչվել արժեք կամ ոչ արժեք»⁸: Գնահատման օգնությամբ մենք մեր սուբյեկտիվ վերաբերմունքն ենք արտահայտում համապատասխան ֆենոմենի հանդեպ, որոշակիորեն բնութագրում ենք այն՝ դիտարկելով այն մեր պահանջմունքների, շահերի, նայատակների և այլնի առումով: Հարկ է նշել նաև, որ առանձին պահերի գնահատումը կարող է դիտարկվել որպես ճանաչողական գործունեության տարր, որը որոշ չափով բնորոշում է ամրողապես ֆենոմենի մասին ձևավորվող պատկերացման առանձնահատկությունները:

Այսպիսով, իրավականակացման վերլուծվող բնորոշման գործնականորեն բոլոր հատկանիշները տարրալուծվում են «ճանաչում» հասկացությամբ: Բացառություն է կազմում, թերևս, միայն «իրավունքի՝ որպես միասնական սոցիալական երևույթի հանդեպ վերաբերմունքը և դրա բուն գնահատականը որպես ամրողական երևույթի (այլ ոչ առանձին պահերի, ինչպես ասված է վերը): «Ճանաչում» կատեգորիայի միջոցով իրավականակացման բնորոշում է առաջարկում նաև «Մ. Բայտինը, որը մասնավորապես արձանագրում է, որ իրավականակացումը ոչ այլ ինչ է, քան «իրավունքի զիտական ճանաչում և նրա բացատրում՝ որպես հասարակական հոգևոր կյանքի յուրահատուկ, հարաբերականորեն իմքնուրույն, ամրողական, համակարգային երևույթի»⁹:

Սակայն մյուս կատեգորիաների վերաբերյալ «ճանաչում» կատեգորիայի ավելի լայն բովանդակությունը դեռ չի նշանակում, որ ճանաչումը իրավահակացման առանձնահատկությունը բացահայտող է։ Ըստ հաճախ իրավահակացման տակ նկատի են ունենում իրավունքի ճանաչման կառուցվածքի առանձին տարրերը, իրավունքի և իրավական առանձին երևոյթների ընկալումը, պատկերացումը իրավունքի մասին և իրավունքի հասկացությունը։ Ճանաչողական գործունեության հենց այս առանձին տարրերը (փուլերը) հաճախ են ենթադրվում «իրավահակացում» կատեգորիան օգտագործելիս¹⁰։

Եվ այս իմաստով առավել ճշգրիտ և հասկացությունների ձևակերպման տրամաբանությանը համապատասխանող ենք համարում այն մոտեցումը, համաձայն որի՝ իրավահակացումը դիտարկվում է որպես մարդու մտածողական գործունեության գործընթացն ու արդյունքը արտահայտող գիտական կատեգորիա, որը ներառում է իրավունքի ճանաչումը և նրա գնահատումը որպես ամբողջական երևոյթի»¹¹։

Տվյալ մոտեցման հիման վրա իրավահակացումը առաջարկում ենք դիտարկել երկու առումով։

Առաջին որպես իրավունքի գիտական ճանաչման, դրա էության, հիմնավորման, առաջատար սկզբունքների և հատկանիշների յուրատեսակ սոցիալական գործընթաց։

Երկրորդ որպես հասարակական գործունեության, գիտական ակտիվության անհրաժեշտ արդյունք հանդիսացած գիտական կատեգորիա, որն իր տեղում է գրավել իրավագիտության մեջ¹²։

Այսպիսով, իրավահակացումը լայն իմաստով կարող է դիտարկվել որպես ինտելեկտուալ գործունեություն՝ ուղղված իրավունքի ճանաչմանը, ճանաչողական-իրավական գործունեության առանձին տարրեր (իրավական երևոյթների ընկալում, պատկերացում իրավական երևոյթների և ընդհանրապես իրավունքի մասին, իրավունքի հասկացություն), ինչպես նաև ճանաչողական-իրավական գործունեության ընթացքում ձեռք բերված մեկնարկ իրավական գիտելիքների ամբողջականություն (կամ համակարգ)։

¹ Տե՛ս Шлескин С.И. Проблема права. Философско-методологический аспект. М., 2013. С. 8-9.

² Տե՛ս Попов В. И. Правопонимание в советской юридической науке. Автореф. дис.... канд. юрид. наук. М., 2001. С. 8.

³ Տե՛ս Леушин В. Я, Перевалов В. Д. Понятие, сущность и социальная ценность права // Теория государства и права / Под ред. В. М. Корельского, В. Д. Перевалова. М., 1998. С. 217.

⁴ Տե՛ս Фогараши Б. Логика. М., 1959. С. 205.

⁵ Տե՛ս Айдинян Р. М. Система понятий и принципов гносеологии. Л., 1991. С. 88.

⁶ Տե՛ս Նույն տեղում, էջ 58:

⁷ Տե՛ս Философский словарь / Под ред. И. Т. Фролова. М., 1980. С. 58.

⁸ Տե՛ս Тугаринов В. П. Избранные философские труды. Л., 1988. С. 263-264.

⁹ Տե՛ս Байтін М. И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001. С. 17.

¹⁰ Տե՛ս Այդինյան Բ. Մ. Համակարգությունը և համակարգության տեսչությունը. Երևան, 1991. 256 էջ.

¹¹ Տե՛ս Ժելեզնովա Ն. Դ. Համակարգությունը և համակարգության տեսչությունը: Կառավարման տեսչությունը. Տեսչությունը և համակարգությունը. Երևան, 2003. 14 էջ.

¹² Տե՛ս Ժելեզնովա Ն. Դ. Համակարգությունը և համակարգության տեսչությունը: Կառավարման տեսչությունը. Տեսչությունը և համակարգությունը. Երևան, 2003. 14 էջ.

Վարդան Սահքալյան

Ասպիրանտ ինստիտուտի ֆիլոսոփիա,
սոցիոլոգիա և իրավու ՀԱՀ ՊԱ

РЕЗЮМЕ

О правовых вопросах научного познания

В статье подробно рассматриваются правовые вопросы научного познания. Автор анализирует вопросы правопонимания в теоретической литературе и дает определение понятию «правопонимание», как 1) признание права, 2) восприятие права, 3) оценка и значимость права.

Ключевые слова: правопонимание, научное познание, правовое восприятие, сущность права, содержание права.

Vardan Sakhkalyan

PhD Student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

On the legal questions of scientific knowledge

The article reviews in detail the legal issues of scientific knowledge. The author analyzes the issues of legal thinking in the theoretical literature, and provides a definition of «legal thinking» as 1) recognition of law, 2) perception of law, 3) assessment and importance of the law.

Keywords: legal thinking, scientific knowledge, legal perception, the essence of law, the content of the right.